

Գ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄՅՈՒՆԻԲՈՒՄ ԵՎ ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿԻ ԽՆԴԻՐԸ

Սույն հոդվածի նպատակն է մատենագրական աղբյուրների և վիճական արձանագրությունների վկայությունների հիման վրա լուսաբանել զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (9—13-րդ դդ.) մեծ ծավալ ստացած դրամական շրջանառության, մասնավորապես արծաթյա դրամի կիրարկման ոլորտի ընդլայնման, ինչպես նաև վանական-եկեղեցական կալվածատիրության մեջ դրամական ռեստայի արմատավորման հետ կապված մի շարք հարցեր։ Այս իսկ առումով հատուկ անդրադարձել ենք Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակի բացահայտման խնդրին։

9-րդ դ. երկրորդ կեսից Հայաստանը թեկնդիրում է զարգացման մի նոր շրջան: Սյունյաց և Արծրունյաց իշխանների օգնությամբ հզորանում են Բագրատունիները, որի դրական արդյունքը լինում է Հայաստանում պետական իշխանության՝ Բագրատունյաց դինաստիայի հիմնադրումը: Այդ պատմական խոշոր իրադարձության շնորհիվ երկրի տարանջատված և քայքայված արտագրողական ուժերը ապրում են մեծ վերելք. սկսում են վերակենդանանալ քաղաքներն ու գյուղերը, ձեռնարկվում են շինարարական նոր աշխատանքներ, հատկապես աշխուժանում են արհեստներն ու առևտուրը, որոնք մեծապես նպաստում են դրամական հարաբերությունների հարաճուն զարգացմանն ու ծավալմանը: Այս համընդհանուր զարգացման միտումը, սաղմնային վիճակում, իր կոնկրետ դրսևորումն էր գտել դեռևս մինչ այդ «Արաբական խալիֆաթի առաջացրած տեղաշարժերի հետևանքով»¹, երբ նախկին բնահարկի փոխարեն ենթակա ժողովուրդներից արաբ հարկահանները պահանջեցին կանխիկ դրամ²:

Մարքսը գրում է, որ ֆեոդալական հարաբերությունների զարգացման որոշ աստիճանում «հարկերը... նատուրալ մատակարարումից դառնում են փողային վճարումներ»³, իսկ «Արդյունքներով ռենտան իդիալիզմում է դրամական

1 հ. Ս ա մ ր ա լ յ ա ն, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1-ին, Երևան, 1939, էջեր 127—128, 135:

2 Պատմութիւն Ղեռնդայ Մեծի վարդապետի հայոց, էջ 14, ՍՊԲ, 1887: Վարդան Բարձր-
յերրոցի, Պատմութիւն տիեզերական, էջ 93, Մոսկվա, 1861:

3 Կ. Մ ա Ր Ք ա, Կապիտալ, Հ. 1-ին, Երևան, 1954, էջ 151:

կամ փողային ռենտայի ֆեոդալական հասարակության դարպաղման ավելի բարձր փուլում⁴։ Այս գրույթները լիովին հաստատվում են միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության բաղմամբիվ օրինակներով։ Միայն այն իրողությունը, որ «10—11-րդ դարերում նույնիսկ գյուղական հարկերն ստացվել էին դրամով»⁵ բաց ամենայնի հաստատում է փողի շրջանառության լայնածավալ շառավիղը և նրա ֆունկցիաների նկատելի շարժունությունը։

«Երամական շրջանառության ընդարձակման շնորհիվ, — գրում է պրոֆ. Բ. Առաքելյանը, — ավելի զգալի չափով հարկեր էին գանձվում դրամով»⁶։ Հարկերը դրամով գանձելու պրակտիկան կիրառեցին նաև սելջուկ-թուրքերն ու մոնղոլները։ Հատկապես վերջինները իրենց հարկադրման ամենասոսկալի ձևերով դերազանցեցին բոլոր ժամանակների աշխարհավեր հարկահաններին։

Նույնով մոնղոլ հարկահանների դամառնությունների մասին, ժամանակի պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եւ որ ոչ կարէր հատուցանել զսակն, զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն»⁷։

Նույնը կարողում ենք ռուսական մի վավերագրում։ Բ. Գ. Բաֆուրովը նշում է, որ մոնղոլները ղոփշուր կոչված հարկը (գլխահարկը) վերցնում էին դրամով՝ յուրաքանչյուր անձից 1-ից մինչև 10 դինար, իսկ խորասանում ղեպքեր են եղել, որ 10 մարդուց գանձվել է մինչև 700 դինար, չհաշված մյուս հարկերը։

Հայաստանի օտար տիրապետողները, ասվում է 14-րդ դարի սկզբներին շարադրված մի վարքագրության մեջ «եղին հարկս ի վերայ քրիստոնեից և յամենայն գլխոյ առնուին եսթն ութ դահեկան՝ յամենայն ամի. կամ ուրանալ զՔրիստոս, կամ տալ զդահեկանն՝ որ է խարաճ»⁸։

4 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, 2-րդ մաս, Երևան, 1949, էջ 336։

5 Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940, էջ 36—37։

6 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., 2-րդ հատոր, Երևան, 1964, էջ 59։ Պրոֆ. Բ. Առաքելյանը վկայում է, որ թբիլչէ և այդ ժամանակաշրջանին (9—13-րդ դդ. — Գ. Գ.) պատկանող գտնների գյուտը։ ՏԼ՝ս նշվ. աշխատ., էջ 54)։ Հմմտ. А. Г. Сукиасян, Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма, стр. 375—376, Ереван, 1963, Б. Г. Гафуров, История таджикского народа, стр. 134, Госполитиздат, 1952.

7 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1910, էջ 349։

8 Հ. Բարայան, Հայաստանի հարկային սխտեմը մոնղոլական տիրապետության շրջանում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 7, 1948, էջ 63.

9 Б. Г. Гафуров, История таджикского народа, стр. 288, Госполитиздат, 1952. Ուշադրություն է դրվում այն իրողությունը, որ մոնղոլների ժամանակ հարկահանության կապալային սխտեմը տարածված էր ամբողջ Հայաստանի վրա, բացառությամբ Սյունիքի (տե՛ս Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., հատ. 2, էջ 283, Երևան, 1964)։ Մոնղոլական տիրապետության շրջանում Սյունյաց նահանգի համեմատաբար բարավոր վիճակը բացատրվում է Սյունի իշխանների, հատկապես Սմբատ գահերեցի քաղաքական եռանդուն գործունեությամբ։ Սմբատ իշխանը քանիցս լինում է Կարակորումում, բանակցություններ է վարում Մանգուխանի հետ, վերջինից ստանալով ոսկի փայլղա և հատուկ յառլեխ (հրաման)՝ Սյունիքի արտոնությունների և անձնեմխելիության առթիվ (տե՛ս Ս. Օրբելյան, Պատմութիւն, Մոսկվա, 1861, էջ 301), սակայն մոնղոլները շատ հաճախ դրժում էին իրենց խոստումները։

10 «Հայոց նոր վկաները», Վաղարշապատ, 1903, էջ 121—122։

Հարկապահանջության կոնկրետ դրսևորումների իրական պայակերը մեծ չափով արտացոլված է Հայաստանում և նրա սահմաններից դուրս սփռված տասնյակ հազարների հասնող վիմադիր արձանագրությունների մեջ: Մատենագրական աղբյուրների և վիմագիր արձանագրությունների հարուստ փաստերը պատմաբաններին հիմք են տալիս նաև եզրակացնելու, որ «12—13-րդ դարերում հողերի ու կալվածքների առքն ու վաճառքը ավելի է ընդարձակվում, որը վկայում է դրամի գների աճի ու դրամական շրջանառության մեծացման մասին»¹¹: Եվ քանի որ դրամը անհրաժեշտության դեպքում «կարող է անմիջապես փոխարինել ամեն իմ ապրանքի»¹², հետևաբար, զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում, կալվածատեր վանքերն ու եկեղեցիները ևս, իրենց աշխարհիկ ֆեոդալների աջակցությամբ և հովանավորությամբ հարկատու գյուղերից գանձվող տասանորդը նախընտրում էին վերցնել կանխիկ դրամով, որպիսի երևույթի մենք հանդիպում ենք Սյունիքի եպիսկոպոսական վիճակում, ևկսած 9-րդ դարի 30-ական թվականներին:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում փողը մարմնավորված ենք տեսնում հատկապես դրամ, դահեկան, դուկատ դահեկան (երբեմն դեկան և դահյակ), դինար, դինարիոն, դիրհամ, սպիտակ, սպիտակ սուլտանի, ստակ, կինեին(ք) և այլ արտահայտություններում: Հիշյալ անվանումների մեջ ամենից գործածականը դահեկանն է¹³: Վերջին «կինեինք» անսովոր ձևը մեզ հանդիպում է Հաղբատի ս. նշան եկեղեցու հյուսիսային պատին արտաքուստ փորագրված 1655 թ. մի արձանագրության մեջ¹⁴:

Եթե ընդունում ենք, որ միջնադարյան աղբյուրներում և հատկապես վիմագրական հիշատակարաններում ամենահաճախակի գործածականը եղել է դրամի կոնկրետ դրսևորում հանդիսացող դահեկանը, ապա մեզ մնում է պարզել, թե ի՞նչ նյութական մարմնավորում է ունեցել այն, այսինքն ունեցել է ոսկու՝ արծաթի, թե՛ այլ մետաղի պարունակություն:

Բարեբախտաբար աղբյուրները հուշում են դրա պատասխանը. եթե դրամը ոսկուց է, այն կոչվում է դուկատ դահեկան, կարմիր, կարմիր

11 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները..., հ. 2, Երևան, 1964, էջ 55:

12 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1-ին, Երևան, 1954, էջ 143:

13 Դահեկանի բացատրությունների մասին տես ռուս բառագիրը Հայկազան լեզուի», հ. Ա, էջ 592, Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. 2, էջ 483, Հ. Ավդեբյան, Բացատրություն շափից և կշոց, էջ 27, Հ. Մանանդյան, Չափերն ու կշիռները հնագույն հայ աղբյուրներում, Երևան, 1930, էջ 22—23, Ղուկաս Վանանդեցի, Գանձ շափուց, կշոց, թուց և դրամոց բոլոր աշխարհի, որ է գիտություն ամենայն տեսակ կշոց, շափուց և դրամից, որով բոլոր աշխարհի վաճառականությունն վարի, Ամստերդամ, 1699:

14 Կարո Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 143: Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը ենթադրում է, որ դա «անգլերեն guinea բառն է, որ հետո ոսկե դրամ էր»:

15 Գոչավանքի արձանագրություններից մեկում Ումեկի որդի ճարը (մեծ ճարի թուր) հիշատակում է, որ իր հայրը (Ումեկը) «Գնեսու էր գԳետիկ ի բառասուն հազար կարմիր տուկա-տի»: Հետևելով հորը ինքը ևս գնում է Ճուլս գյուղն իր շրջակայքով «ԳԴ (4000) կարմիր տուկա-կաթի» և ընծայարկում է Գետիկի Ս. Աստվածածին եկեղեցուն (Վիմական տարեգիր, 124—125, Շհն. 603/բ 367): Ոսկե դահեկանի մասին հիշատակություն ունի նաև Ատ. Օրբելյանը, Պատմութիւն, Մոսկովա, 1861, էջ 258—259: «Ընծայէ (Իւանէ — Գ. Գ.) և աղերս սխարէկին 500 դահեկան կարմիր յազնուական ոսկուց...» «Բայց տուա ի գինս գերեալ խաչին ի լիպարտէ 1000 դահեկան կարմիր» որպէս ասացաքն»:

դահեկան¹⁵, իսկ եթե արժաթից է, այդ դեպքում սոսկ դահեկան¹⁶ կամ՝ արծաթ, ինչպես նաև սպիտակ, որի հիշատակությունը կա վիմական արձանագրությունների մեջ, հատկապես 13-րդ դարում: Եվ քանի որ մեր նպատակն է ապացուցել այն իրողությունը, որ Հայաստանում շրջանառության մեջ է եղել հիմնականում արծաթ դրամը, ուստի ցանկանում ենք ժամանակագրական հերթականությամբ մեջբերել այն արձանագրությունների հատվածները, որոնցում կիրառվում է «սպիտակ» դրամ արտահայտությունը:

1252 թ. (չա), Խորակերտ — Հովհաննեսի որդի Ստեփանոսը այգիներ է գնում՝ վճարելով «սպիտակ սուլտանի»¹⁷,

1255 թ. (չդ), Սանահին — Քրիստոսատուր կողբցին իր ազգականներով Սանահինի ուխտին նվիրում է որոշ քանակությամբ «սպիտակ»¹⁸,

1266 թ. (չժե), Քանաքեռ — վաճառվում է այգի «ԳՌԲԺ (3200) սպիտակ, ընդ որում վաճառագիր կաղմողը՝ Մխիթարիչ երեցը ստանում է որպես վարձատրություն համապատասխան «դահեկան»¹⁹,

1269 թ. (չժը), Հոռոմոս — Շարապշահի դուստր Թաիկ թագուհին Հոռոմոսի վանքին նվիրում է նաև «ԷՃ՝ (700) սպիտակով գրավկնած Աբելի ակը», իսկ նրա որդին Հաղարապեկը «ԸՃ՝ (800) սպ(իտակ) ի վերայ խարճ արար, որ եղավ ՌՇ (1500) սպ(իտակ)»²⁰,

1273 (չիբ), Հաղբատ — տեր Հովհաննեսը սահմանում է «ծառղարդարին երիցարացն երկու սպիտակ յերէցն տալ»²¹,

1274 (չիգ), Տեղեր — Ոմն Շիրապարի ընտանիք եկեղեցու հայրերին նվիրում է «Մ. Ռ. (2000) սպիտակ»²²,

1275 թ. (չիդ), Սանահին — Վարդան բահանան ոմն Ատոմի այգին գնում է «յհե (375) սպիտակի»²³,

1278 (չհէ), Հաղբատ — Ծիթվասանը (Ծիթվասան՝ ըստ Ղաֆաղարյանի) ընծայում է... «ԳՌ սպիտակ»²⁴,

1283 (չլբ), Այրիվանք — Պոռշ իշխանը մի շարք գյուղերով հանդերձ Այրիվանքին նվիրում է «ԺՌ (10000) սպիտակ»²⁵,

¹⁵ Մ ա տ թ ե ո ս Ու ռ հ ա յ ե ց ի, ժամանակագրություն, 1898, էջեր 91, 100, 106, 125, 142, 198, 309, 426—427 և այլն. Ս ա մ ու լ ի Ա ե ե ց ի, Հատմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1891, էջեր 106, 155, Մ ի ի թ ա Ր Ա յ Ր ի վ ա ե ե ց ի, էջ 51, Ա Ր ի ս տ ա կ հ ս Հ ա ս-ս ի վ ե Ր տ ց ի, Պատմություն, 1912, էջ 109, «Վիմական տարեգիր», էջեր 28, 48, 84, 89, 91, 95, 97, 100, 102, 142, 143, 229, 230, 233—234, 239 (2 անգամ), 240, 241, 243, 241 (3 անգամ), 249 և այլուր:

Նկատելի է, որ 14-րդ դարից սկսած գործածության մեջ է մտնում ստակ տերմինը (տե՛ս Մատենդարանի ձեռ. № 4669, էջ 172ու, «Վիմական տարեգիր», էջեր 173, 175, 177, 182), հետագայում՝ նաև փող («Վիմական տարեգիր», էջ 216):

¹⁷ «Վիմական տարեգիր», էջ 97:

¹⁸ Նույն տեղում, էջ 99, Ղ ա ֆ ա ղ ա Ր յ ա ն, Սանահին, էջ 165:

¹⁹ Նույն տեղում, էջ 109:

²⁰ Նույն տեղում, էջ 112 («Վիմական տարեգրում» տպված է «ՈՇ», որը պարզապես վրիպակ է):

²¹ Նույն տեղում, էջ 115:

²² Նույն տեղում, էջ 118:

²³ «Վիմական տարեգիր», էջ 118, Ղ ա ֆ ա ղ ա Ր յ ա ն, Սանահին, էջ 162:

²⁴ Նույն տեղում, էջ 120, Ղ ա ֆ ա ղ ա Ր յ ա ն, Հաղբատ, էջ 159:

²⁵ Նույն տեղում, էջ 125:

1286 (չլե), Հոռոմայր — Ոմն Ասկիս Հոռոմայրին նվիրում է «հարիւր սպիտակ»²⁶,

1293 (չխբ), Հավուց թառ — Գիրբ և Շաքար ամուսինները «Ո.(1000) սպիտակի» այգի են գնում և ընծայում սույն ուխտին²⁷,

1244 և 1283, Սաղմոսավանք — Քրդի ոբդի Վաչեն (Վաչե 1-ինի թոռ) գնում է «...տասն հազար սպիտակի զԱղկունծ յիւանէէ, յորդո Շահնշահի...»²⁸,

Ինչպես բերված օրինակները ցույց են տալիս հիշյալ ժամանակաշրջանում շրջանառության մեջ է եղել գերազանցապես արծաթ դրամը։ Մարքսը նշում է, որ «Երբեմն ոսկին էր շուփազանց բարձր գնահատվում, երբեմն՝ արծաթը»²⁹, Կարելի է եզրակացնել, որ մեզ հետաքրքրող ժամանակահատվածում բարձր էր գնահատվում արծաթյա դրամը։ Որ իսկապես 13-րդ դարում շրջանառության մեջ էր արծաթյա դրամը, ուղղակիորեն վկայում է նաև Ստեփանոս Օրբելյանը։ Նա հիշատակում է, որ Արղունի եղբայր Քեյդաթուն 1291 թ. «ետկտրել դրամ և դահեկան քարտիսէ (թղթադրամ — ր. ր.)՝ ունելով յինքեան գիր և խայտուածս, և կամէր բառնալ զաւծաթի դրամն, զի այնու վաճառեացեն»³⁰,

Դրամական հարաբերությունների զարգացումը իր ցայտուն դրսևորումն է գտել նաև Սյունյաց նահանգում։ Այս նահանգի տոհմական պատմիչ Ստեփանոս Օրբելյանը իր արժեքավոր «Պատմութիւն տանն Սիսական» աշխատության մեջ բերում է բազմաթիվ փաստեր, որոնք ըստ էության բնութագրում են դրամի կիրառության մեծ ծավալի մասին՝ սկսած հատկապես 9-րդ դարի 1-ին կեսից։

Այսպես, 839 թ. Սյունյաց Դավիթ եպիսկոպոսը Վասակի որդի Փիլիպեից 10000 դրամով դնում է Արծիվ գյուղը իր շրջակայքով³¹։

881 թ. Սողոմոն եպիսկոպոսը Հրահատ Սյունեցուց գնում է Դարատափի վայրը «ընդ հազար և երկերիւր դրամի»³²։

Սյունյաց նշանավոր տիկին Մարիամը, որ պատմության մեջ հայտնի էր իր շինարարական գործունեությամբ, «...գնեալ ի հազարացի մարդկանէ զգիւղն Շողուագայ ընդ 60000 դրամի»³³, նվիրում է իր կառուցած եկեղեցուն։ Այնուհետև այս արքայադուստրը 3000 դահեկանով Մազազ գավառում նույն նպատակի համար գնում է ևս մեկ գյուղ³⁴։ Գրիգոր Սուփան իշխանը 903 թ. կառուցելով Կոթի ս. Աստվածածին եկեղեցին, տալիս է «...միոյ միոյ քահանայի յիսուն դրամ ի տարւոջն...»³⁵։ Նույն իշխանը մի շարք ընծայաբերումների հետ

26 Նույն տեղում, էջ 128։

27 Նույն տեղում, էջ 136։

28 Նույն տեղում, էջ 147։ Սպիտակ դրամի շրջանառության դեպքերի հիշատակություններ կան «Վիմական տարեգրի» 145, 152, 156, 226, 233 և այլ էջերում։ Տես նաև Կ. Ղ ա ֆ ա դ ա ր - յ ա ն, Հաղբատ, 1963, էջեր 159, 171, 179, 243։ Նույնի՝ Սանահին, 1957, էջեր 160, 162, 165, 185։

29 Կ. Մ ա ր ք ս, Կապիտալ, հ. 1-ին, Երևան, 1954, էջ 105—106։

30 Ս տ ե փ ա ն ո ս Օ ռ բ է լ յ ա ն, Պատմութիւն, էջ 342—343 (ընդգծումը մերն է — Գ. Գ.)

31 Ս տ ե փ ա ն ո ս Օ ռ բ է լ յ ա ն, Պատմութիւն, Մոսկվա, 1861, էջ 150։

32 Նույն տեղում, էջ 157։

33 Նույն տեղում, էջ 127։

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում, էջ 130, «Վիմական տարեգրի», էջ 5։

միասին Մաքենոցաց վանքին տալիս է նաև «...եօթն հարիւր դրամ ի Դեղձանայ գետոյ դապալէն, երկու հարիւր դրամ ի Կաթկայ (ըստ Ալիշանի՝ Կոթկայ) երեք հարիւր յիսուն յԱնմեռէն, որ լինի 1250 դրամ»³⁶:

903 թ. տիկին Մարիամի եղբայր սպարապետ Շապուհ Բագրատունին վանեվանին ընծայում է նաև «...երկու հարիւր վաթսուն դրամ ի Կոթաքաղէն, հինգ հարիւր երեսուն ի Բրտենեացն, վեց հարիւր վաթսուն յԱղաբոյ վանացն ծովէ, ինն հարիւր իննսուն ի Կարբին գետերէն և նաւերէն»³⁷:

932 թ. Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը վասակի որդի Փիլիպէից «ընդ երկոտասան հազար դրամի և մին մեծագին գոհարի» գնում է «ըջուրն Վագեձորոյ, որ Վարարակն կոչի»³⁸: Սյունյաց Սմբատ թագավորի կին Շահանդուխտը իր որդիներ վասակի և Սևադայի հետ միասին 998 թ. Տաթևի վանքին է նվիրում «6000 դրամ և զգիւղն Տեղ, որ ի Հարանդ գաւառի»³⁹:

Մեծածախ գնումներ է անում հենց ինքը՝ Ստեփանոս Օրբելյան պատմիչ արքեպիսկոպոսը: Նա Դլենի թոռներից դնում է խաչ՝ 500 դահեկան արժողությամբ, իսկ խաչի պահարանի համար ծախսվում է 1000 դրամ⁴⁰: Զուրջի որդի Ամիրան 4000 դրամով գնած Արփայում գտնվող այգին նվիրում է նորավանքին՝ հանձին Ստեփանոս Օրբելյանի⁴¹: Անձամբ Օրբելյանը 2500 դրամով նույն վայրում գնում է այգիներ⁴², և «գիւղն Զուայ», վճարելով 21000 դրամ⁴³:

Ինչպես տեսնում ենք, Սյունիքում ևս դրամական հարաբերությունները բուռն զարգացում են ապրում, որի վառ դրսևորումն է Ստեփանոս Օրբելյանի մոտ պահպանված՝ վանքին տրվող դրամական հարկերի ցուցակը՝ ըստ առանձին գավառների և շենքերի: Նախորդ էջերում նշել ենք, որ հողեր ֆեոդալները ևս իրենց տրվող տասանորդը, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, ամեն կերպ ջանք էին գործադրում գանձել դրամով: Մեր ասածի ասկացույցը կարող են հանդիսանալ մատենագրական աղբյուրներից և վիմական արձանագրություններից մեջ բերած բազմաթիվ օրինակները: Իհարկե շենք ժխտում, որ հարկահանությունը կատարվել է պատմությանը հայտնի աշխատավճար, բնավճար և դրամական ռենտաների ձևերով⁴⁴, սակայն այդ շրջանում Սյունիքի վանական կալվածատիրության մեջ մեծագույն դեր էր հատկացված փողի շրջանառությանը, որովհետև «Իրամի պիւր մեծացել էր, — գրում է պրոֆ. Ի. Առաքելյանը, — եկեղեցին ևս ջանում էր իր հասույթները դրամով ստա-

36 Նույն տեղում, էջ 131, «Վիմական տարեգիրք», էջ 5:

37 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 133:

38 Նույն տեղում, էջ 185—187:

39 Նույն տեղում, էջ 213—214:

40 Նույն տեղում, էջ 356—357:

41 Նույն տեղում, էջ 359:

42 Նույն տեղում, էջ 359:

43 Նույն տեղում, էջ 360:

44 Բ. Հարությունյանը գտնում է, որ 9—15-րդ դարերում Հայաստանում հարկերը փողով չեն գանձվել բոլորովին (տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիրք», 1952, № 1, էջ 119): Պրոֆ. Ս. Պողոսյանը Բ. Հարությունյանի տեսակետը համարում է «անհավանական և անհիմն» (տե՛ս Ս. Պ. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—11-րդ դարերում, Երևան, 1956, էջ 198): Գտնում ենք, որ պրոֆ. Ս. Պողոսյանը իրավացի է:

նալ»⁴⁵։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը նշում է, որ «հաս» հարկը եկեղեցին վերցնում էր ամեն մի ծխից մեկ դրամի չափով⁴⁶։

Կիւլյան Ռուսիայում նույնպես հոգևոր ֆեոդալները աշխատում էին եկեղեցու տասանորդը վերցնել դրամով՝ գրիվնաներով⁴⁷։

1150 թ. սեպտեմբերի 10-ի զրամոտայով իշխան Ռուստիսլավ Մստիսլավիչը եպիսկոպոս Մանուիլին շնորհում է մի շարք արտոնություններ՝ տասանորդը հավաքելու ժամանակ⁴⁸։ Հիշյալ իշխանը Սմոլենսկի ս. Աստվածածին եկեղեցուն և եպիսկոպոսին թույլատրում է հավաքել «десятину от всех даней смоленских... в Хотшине дани 200 гривен, а из того епископу взяти 20 гривен; а в Вотоовичи дани 100 гривен, а из того епископу 10 гривен; а в Шуйспей дани 80 гривен, а из того епископу 8 гривен; а в Дешняных 30 гривен, а из того епископу 3 гривны; а в Ветьскеи дани 40 гривен, а из того епископу 4 гривны; а на Былеве дани 20 гривен, а и епископу из того 2 гривны...»⁴⁹։

Մենք դիտավորյալ մեջ բերեցինք 12-րդ դարի այս մեծարժեք փաստաթղթից բավականաչափ ծավալուն հասկած, որպեսզի ցուցադրենք այն իրողությունը, որ բրիտոնյա (և ոչ միայն բրիտոնյա) եկեղեցիները նպատակ էին հետապնդում տասանորդը կամ որ նույնն է՝ պտղին առաջին հերթին գանձել կանխիկ դրամով, իհարկե դրամի բացակայության դեպքում նաև բնամթերքով, որի հավաքումը շատ հաճախ գլխացավանք էր պատճառելու հոգևոր հարկահաններին։

Եկեղեցու պաշտոնյաները հանգուցյալի ընտանիքից վերցնում էին նույնիսկ այսպես կոչված հողագրամ, այսինքն՝ վաճառում էին գերեզմանի համար նախատեսված հողակտորրու «Արդ յայտ է, — արձանագրում է Մխիթար Գոշը, — թե դրամդ հողայ ի կուպալաւոր քահանայից եղև վաճառել զգերեզմանս, մինչև զի եւ հաղորդի առնուլ դրամ և աւետարանի...»⁵⁰։

Հայ եկեղեցու պետերը քարոզում էին հավատացյալներին՝ անթերի տալ հարկերը, «ըստ սահմանեալ կանոնաց» և շլինել «քննիչ և դատաւորք առաջնորդաց»⁵¹։

Պատահական չէ, որ այս շրջանում պատմական ասպարեզ են գալիս այն-

45 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., հ. 2, Երևան, 1964, էջ 59։

46 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2-րդ, էջ 103։

47 Գրիվան 9—12-րդ դդ. Կիւլյան Ռուսիայում գործածվող արծաթյա 10 կոպեկանոցն էր, որի կշիռը կազմում էր 150—250 գր.։ «Ռուս-հայերեն բառարանի» 1-ին հատորում (էջ 382, 1954) գրիվնայի կշիռը հաշված է մոտ մեկ ֆունտ։

48 Памятники истории Киевского государства, IX—XII вв.; Сборник документов, подготовил к печати Г. Е. Кочин, Л.-д., 1936, стр. 155.

49 Նույն տեղում, էջ 213—214։ Հետաքրքրական է այն երևույթը, որ սույն զրամոտայում եպիսկոպոսին հյուրանոցներից տրվող տասանորդի չափը չի սահմանվում։

50 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, էջ 279—280, 1830, տե՛ս նաև Մատթեոս Ունհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 324։ Վաղարշապատ, 1898։ «Եւ տուաւ (Գող Վասիլը կաթողիկոս Բարսեղին — Գ. Գ.) հողագրամ հազար դահեկան, պատարագաց հարիւր և հիսուն հազար դահեկան (այլ օր. հարիւր և յիսուն դահեկան), աւելի և ոչ պակաս և մատաղ անթիւ»։

51 Մատենադարանի ձեռագիր № 596. Թ. Թ. 42ա—42բ։

պիսի մեծահարուստ կղերականներ, ինչպիսիք են Պետրոս Գետադարձ կաթողիկոսը (11-րդ դար), Արծնի Դավթուկ քորեպիսկոպոսը և ուրիշներ: Պետրոսի «հայրապետանոցի ճոխությունը մրցում էր արքունիքի ճոխության հետ»⁵², նրա սեփականությունն էր կազմում «...հինգ հարիւր դեղ անուանի և մեծանիստ և շահաւետ ընտիր ընտիր, նոյնպէս և հպիսկոպոս հինգ հարիւր փառաւոր և գաւառապետս ի վերայ եօթն հարիւր թեմի հանապազ. երկոտասան եպիսկոպոս և շորս վարդապետ ի տանն Հայրապետին և վաթսուն երէց իր կրօնաւորաց և յաշխարհականաց հինգ հարիւր...»⁵³, Իսկ Դավթուկ քորեպիսկոպոսի գանձարանը դատարկելիս պահանջվեց 40 ուղտ՝ գանձերը տեղափոխելու համար, «...ութ հարիւր վեցկի եզանց ելանէին ի տանէ նորա...» — գրում է պատմիչը⁵⁴:

Նույնպիսի մեծամեծ հարստություններ են կուտակում նաև մահմեդական կրօնի գաղափարախոսները⁵⁵: Բ. Գ. Գաֆուրովը նշում է, որ մուսուլման սադիւրների ձեռքում կենտրոնացել էին բազմաթիվ կալվածքներ, նրանց էր շնորհված արհեստավորներից, առևտրականներից, շուկաներից և այլ վայրերից գանձվող հարկերի հավաքման իրավունքը: Մուհամմադ բին Ահմադ սադիրը այնքան հարուստ էր, որ իր հաշվին պահում էր 60 ֆակիհ (богослов — աստվածաբան), Մեքքա գնալիս նա իր ձանապարհի պաշարը հրամայում էր բարձել 100 ուղտի վրա: Այնքան ազահ էր, որ «սադրի ջահոնի» (տիեզերքի սյուն) փոխարեն ժողովուրդը նրան կոչում էր «սադրի ջհաննամ» (դժոխքի սյուն)⁵⁶:

Հոգևոր հայրերը աշխարհիկ իշխաններին ստիպում էին նույնիսկ պատերազմի ժամանակ «...յամենայն աւարէ, որ բերիցեն յայլազգեաց և յամենայն ստացուածոց և ամենայն գործոց ձեռին և յաշխատութենէ վաստակոց տասանորդա տալ ի տան տեառն»⁵⁷, իսկ «Հոգու փրկության համար» տրվող նվիրաբերումներ Հայաստանում մասսայական բնույթ են կրում հատկապես զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում, երբ պատասխաններն ըստ էության դառնում են առուծախի առարկա⁵⁸, ուստի և դրամական ու այլ եկամտի հորդաբուխ աղբյուր:

52 Բ. Առաքելյան, Քաղաքները..., հ. 2-րդ, էջ 123:

53 Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, էջ 137:

54 Նույն տեղում, էջ 153—154: 800 վեցկին հավասար կլինի 4800 լծկան անասունի. թերևս սա լափազանցություն է, սակայն ապացուցում է հոգևոր առաջնորդների մեծամեծ կուտակումների իրողությունը:

55 Ղուրան, 26 սուրէ՝ էլ-Շուարա, 131, էջ 353, թարգմ. արաբերենից հայերենի Աբր. Ամիրխանեանց, Վառնա, 1909:

56 Б. Г. Гафуров, История таджикского народа, Госполитиздат, 1952, стр. 153, 250.

57 Դավիթ Ալավկաորդի, Դատաստանադիրք, Մատենադարանի ձեռագիր № 839, թերթեր 108բ—109ա, Բ. Առաքելյան, Քաղաքները..., հ. 2, Երևան, 1964, էջ 221:

58 Պատարագի գինը եղել է 20 դահեկան (տե՛ս Ս. Բարխուդարյան, Դիտողություններ Երևանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների մասին, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», № 5, 1947: Ս. Բարխուդարյանը, այլ առիթով պատարագի գնի մասին հիշատակում է նաև «Միչնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ» խորագիրը կրող իր նոր գրքում, Երևան, 1963, էջ 207—208:

Փողի շրջանառության մեծ ծավալի, ինչպես նաև 9—14-րդ դարերի Սյունիքի վանական կալվածատիրության մեջ դրամական ռենտայի կիրառման յայտուն ապացույց է հանդիսանում Սյունյաց տոհմական պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն տանն Սիսական» աշխատության 73-րդ գլուխը, ուր շարադրված են այդ նահանգի եպիսկոպոսական աթոռին տրվող եկեղեցական հարկերը «ըստ հին սահմանին»⁵⁹:

Այդ հարկացուցակը վաղուց ի վեր եղել է հայագետների ուշադրության կենտրոնում այն առումով, որ նրանում արտահայտված թվական միավորները զանազան ենթադրությունների տեղիք են տվել, քանի որ հարկացուցակում նշված է եղել լուկ հարկատու օբյեկտը («շենը») և նրա դիմաց՝ որևէ թվական միավոր⁶⁰:

Բազմավաստակ Ալիշանի կարծիքով այդ թվերից կարելի է գուշակել «մեծութիւն կամ ճոխութիւն նոցին (դուղերի — ր. ր.), բայց տեսակ հարկին և չափոյն ոչ նշանակին ի հեղինակէն, այլ թուին արմտիք սովորական արմտեաց չափով, և կամ դրամն վարուն»⁶¹, ինչպես տեսնում ենք, Ալիշանն այդ միավորները համարում է կամ արդյունավճար («արմտիք») և կամ դրամական ռենտայի («դրամն վարուն») արտահայտություն⁶²: Սակայն նա իր ենթադրությունները հիմնավորելու համար ոչ մի փաստ չի բերում և ուսումնասիրողը կամա թե ակամա կասկածանքով է վերաբերվում Ալիշանի ճիշտ կռահմանը:

Հարկացուցակի առեղծվածը զբաղեցրել է նաև Մեսրոպ Սմբատյանցին, որն իր «Տեղագիր Գեղարքունի ժովազարդ գաւառի» աշխատության մեջ ենթադրում է, թե «այս ցուցակի մէջ յիշած հարկերը դրամական են երևում»⁶³: Սակայն նա ևս փաստերով չի ապացուցում իր կռահումը, թեպետև, նույն տեղում հիշատակում է, որ «եկեղեցական հարկերը վճարում էին դրամով, ցորենով, իւղով և պանրով, ինչպես այսօր իսկ Սիւնեաց նահանգն և ամենայն Արարատեան նահանգն վճարում է»⁶⁴:

59 Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, էջեր 371—379:

60 Թ. Խ. Հակոբյանը և Ս. Ս. Մելիք-Բախշյանը իրենց «Ստեփանոս Օրբելյան» գրքովում (էջ 63, Հայպետհրատ, 1960) նշում են, որ ամենաթիշ հարկը եղել է 5 միավոր, որը լիսալ է: Նվազագույն հարկը Սյունյաց եպիսկոպոսական աթոռին վճարել է Երեւակ գավառի Սուրբ Գևորգը՝ «2 դահկան և 8 դրամ»: Մենք ստորև հատուկ անդրադառնալու ենք այդ հարցին:

61 Պ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 38 (ընդգծումը մերն է—Գ. Գ.):

62 Ընթերցողը նկատում է, որ Ալիշանը ենթադրել է այդ հարկացուցակի նաև դրամական լինելու մասին, որպիսի փաստը անտեսված է Սյունիքի պատմության մասնագետներից մեկի՝ Լ. Ութմազյանի կողմից: Նա իր մենագրության մեջ («Սյունիքը 9—10-րդ դարերում», Երևան, 1958, էջ 237) անտեսելով «Սիսականի» հեղինակի «դրամն վարուն» արտահայտությունը, այն միտքն է հայտնել, իրր թե Ալիշանի կարծիքով այդ թվերը նշանակում են բեռ ցորեն» (նշվ. աշխ. 237 էջում): Նույն կերպ է վարվել պրոֆ. Ս. Հակոբյանը, տես Հայ գյուղացիության պատմություն, 2-րդ գիրք, էջ 179—180, Երևան, 1964: Ալիշանի նախադասության երկրորդ մասին, մեզ անհասկանալի պատճառներով, հիշյալ հեղինակները չեն անդրադարձել:

63 Տեղագիր Գեղարքունի ժովազարդ գավառի, որ այժմ Նոր-Բայազետ գաւառ, գրեց Մեսրոպը արք-եպիսկոպոս Սմբատեանց Նախիջևանցի, Վաղարշապատ, 1895, էջ 97:

64 Նույն տեղում:

Մեջբերված վերջին նախադասությունից կարելի է հզրակացնել, որ Մ. Սմբատյանցը չի բացառում հարկացուցակի նաև բնահարկ լինելու փաստը, որը հիմնված է իր ժամանակաշրջանում վերցվող եկեղեցական տուրքերի առկայության վրա, այսինքն՝ հեղինակը նկատի է ունեցել 19-րդ դարի երկրորդ կեսում դեռևս կիրառվող եկեղեցական հարկապահանջության եզրանքները:

Ստ. Օրբելյանի «հարկացուցակը» չէր կարող դուրս մնալ սովետահայ պատմաբանների տեսադաշտից: Ի դեպ, նրանց նախապես հետաքրքրել է հարկացուցակի դրույթան ժամանակը: Պրոֆ. Ս. Հակոբյանը գտնում է, որ «հարկացուցակը կազմված է Տաթևի ֆեոդալական վանքի հին վարչական բաժանման հիման վրա»⁶⁵, Որ իսկապես այդ փաստաթուղթը «կազմվել է ոչ ուշ, քան 10-րդ դարը»⁶⁶, նա, իբրև կռվան, ներկայացնում է նախիջևանը 1006 թ. Սյունիքի կազմի մեջ մտնելու փաստը, որպիսին չի արտացոլված հիշյալ ցուցակում:

Պրոֆ. Ս. Հակոբյանին հետաքրքրել է նաև «հարկացուցակում» յուրաքանչյուր գյուղի դիմաց նշված թվական միավորի հարցը: Պատմա-բանասիրական մանրակրկիտ վերլուծությունից հետո, ուսումնասիրողը գալիս է այն եզրակացության, որ այդ շրջանում հարկատու բոլոր գյուղերը վանքին հարկերը վճարել են դրամ-դահենականներով⁶⁷:

Ստ. Օրբելյանի հարկացուցակը՝ այդ «առեղծվածային փաստաթուղթը»⁶⁸ մեծապես հուշել է նաև պատմաբան Հայկարամ Ութմազյանին, որը Սյունիքին նվիրված մենագրության մեջ հստակ անդրադարձել էր այդ հարցի բացահայտմանը: Հ. Ութմազյանին նույնպես զբաղեցրել է հարկացուցակի գրույթան ժամանակաշրջանը: Մի շարք աղբյուրներ վկայակոչելով, նա ևս ենթադրում է, որ «Ս. Օրբելյանի պահպանած հարկացուցակը 10-րդ դարի հարկացուցակ է»⁶⁹:

Այնուհետև հեղինակը հայտնում է դրա «պտղի» լինելու մասին և մի շարք տվյալների հիման վրա ապացուցվում է, որ սույն «պտղին» գանձվել է փողով⁷⁰, Ուրեմն Հ. Ութմազյանի կարծիքով ևս Օրբելյանի «հարկացուցակի թվերն արտահայտում են դրամի միավորը»⁷¹: Սակայն արդի որոշ հետազոտողներ⁷² դեռևս բացահայտված չեն համարում հարկացուցակի առեղծվածը, որովհետև, ինչպես նշում են նրանք, «հարկացուցակում չի ասված, թե այդ

65 Ս. Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն (վաղ ֆեոդալիզմի դարաշրջան), գիրք 1-ին, Երևան, 1957, էջ 323:

66 Նույն տեղում:

67 Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, 1-ին գիրք, էջ 390, տես նաև նույն հեղինակի Հայ գյուղացիության պատմություն, 2-րդ գիրք, Երևան, 1964, էջ 180:

68 Հ. Ութմազյան, Սյունիքը 9—10-րդ դարերում, Երևան, 1953, էջ 234:

69 Նույն տեղում, էջ 232: Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները գրքույկի հեղինակ Հ. Եղիազարյանի կարծիքով հարկացուցակը կազմված է 13-րդ դարում, տե՛ս նշվ. աշխ. էջեր 39, 79, 86 և այլն, Երևան, 1955: Մեր կարծիքով ճիշտ են Ս. Հակոբյանն ու Հ. Ութմազյանը:

70 Նույն տեղում, էջ 238:

71 Նույն տեղում, էջ 239:

72 Բ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախչյան, Ստեփանոս Օրբելյան, Երևան, 1960, էջ 63:

թվերն ինչ միավորներով են արտահայտված՝ բեռով, դրամով, թե մի այլ միավորով:

Ինչպես տեսնում ենք, սկսած անցյալ դարի 90-ական թվականներից մինչև մեր օրերը Օրբելյանի հարկացուցակը եղել է ուշադրության արժանի մի այնպիսի փաստաթուղթ, որի վերջնական և ճիշտ բացահայտումը մեծապես կնպաստեր զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական մի շարք հարցերի պարզաբանմանը Հայաստանում և, մասնավորապես, Սյունյաց նահանգում: Այդ ցուցակի վերծանումը պարզություն կմտցներ հիերոկրատիայի շահագործման ձևերի և վանքապատկան կալվածատիրության կոնկրետ դրսևորումների մեջ:

Հարկացուցակի առեղծվածն ուսումնասիրողներից ոմանք, ինչպես կարելի է կռահել վերը շարադրածից, հիմնականում օգտվել են կամ ոչ ամբողջական, համառոտած ձեռագրերից և կամ Օրբելյանի «Պատմութեան» 1910 և 1911 թվականների հրատարակություններից, որոնցում մեզ հետաքրքրող հարկացուցակը լրիվ չէ, այսինքն բացակայում են մի շարք գյուղեր՝ հարկի չափը որոշող թվական միավորներով հանդերձ: Համեմատաբար ամբողջական է 1861 թ. Մոսկվայում Մ. Էմինի կողմից հրատարակվածը: Այդ հրատարակության մեջ նրնջակ գավառի ընդհանուր (միայն այդ գավառի՝ վանքին տրվող հարկացանկում) հարկի դումարը հաշվելիս, նկատեցինք⁷³, որ Շահկերտից հետո նշվում է Սուրբ Գևորգ բնակավայրը, որը վանքին վճարել է «2 դահեկան և 8 դրամ»⁷⁴: Այս փաստը, հասկանալի է, ուսումնասիրողին պետք է որ մղեր նորանոր պրպտումներ կատարելու: Նպատակահարմար գտանք առաջին հերթին համեմատել Մատենադարանում եղած Ստ. Օրբելյանի «Պատմութեան» բոլոր ձեռագրերի հարկացուցակները: Բացառությամբ № 2868 ձեռագրի, որը բաղկացած է ընդամենը 127 էջից և ուր բացակայում է մեզ հետաքրքրող բնակավայրը, մնացած բոլոր ձեռագրերում հիշատակվում է Ս. Գևորգ շենը՝ իր «2 դրամ և 8 դահեկան» հարկով⁷⁵, իսկ № 6271 ձեռագրի 337 թերթում՝ Սղուկ գավառի նորիք գյուղի դիմաց նշված է «ԺԲ (դահեկան)»: Ի դեպ հարկ ենք համարում նշել, որ այս հետաքրքրական փաստը առաջին անգամ նկատել է պրոֆ. Ս. Ն. Հակոբյանը⁷⁶, որին և, մեր կարծիքով, պետք է վերագրել Ստ. Օրբելյանի հարկացուցակի առեղծվածը վերծանելու առաջնությունը:

Այսպիսով, վերջնականապես լուծված կարելի է համարել Ստ. Օրբելյանի հարկացուցակի խնդիրը՝ հօդուտ դրամականի, իսկ նրա «պտղի» լինելը ապացուցում են որոշ ձեռագրերի (№№ 1458, 2924 և այլն) վերջում ավելացրած

73 Ստ. Օրբելյանի «Պատմութեան» Ղուկասյան մատենաշարի հրատարակության հարկացուցակը թերի է: Օրինակ, նրնջակ գավառի մեջ գետեղված է 10 գյուղ: Իսկ Մ. Էմինի (նա իր ձեռքի տակ ունեցել է 3 օրինակ, ընդ որում Փարիզի 1859 թ. լույս ընծայվածը) կողմից 1861 թ. տպագրածի մեջ նույն գավառի տակ նշվում է 30 գյուղ:

74 Ստեփանոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 378:

75 Հմմտ. Մատենադարանի ֆոնդերում պահվող Ստ. Օրբելյանի հետևյալ ձեռագրերը. ձ. 2698, թերթ 177, ձ. 2869, թ. 224 (327), ձ. 6520, թ. 141, ձ. 6546, թ. 216 (222), ձ. 6271, թ. 337, ձ. 1458, թ. 212, ձ. 7503, թ. 228, ձ. 2924, թ. 152 և այլն: Այս ձեռագրերի մեր կողմից նշված էջերում ընթերցողը կհանդիպի «Սբ Գևորգ — ք. դահեկան և ր դրամ» կապակցությանը:

76 Ս. Ն. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, գ. 1-ին, էջ 390, նրևան, 1957, էջ 390, գ. 2-րդ, նրևան, 1964, էջ 180:

ավելի ուշ շրջանների հարկացուցականները: Օրինակ, № 2924 ձեռագրում մենք կարգում ենք՝ «Տաթևոյ թեմի պտուղն այս է այժմ ժամանակի»: Այս ցուցական անմիջապես հաջորդում է Սուրբելյանի կողմից մեջբերածին, մի հանդամանք, որ նույնպես ապացուցում է պատմիչի հարկացուցակի «պսղի», այսինքն՝ տասանորդ լինելը:

Ա ղ յ ու ա կ

Կոդ	Գավառները և այլք*	Հարկատու գյուղեր	Հարկի չափը հարկացուցականում դահեկաններով	Ծանոթություններ
1	Ծղուկ	75	643	Ծղուկը Այլախի հետ միասին ըստ Ալիշանի 76 գյուղ է, Սիսակ. 255, մեր հաշվումներով՝ 101:
2	Այլախ	26	252	
3	Վոյոց ձոր	92	837	Ըստ Ալիշանի՝ 90 գյուղ: Սիսակ. 255:
4	Գեղա(ը)քունի	47	509	
5	Սողթ**	55	594	Ըստ Ալիշանի՝ Ծարի հետ միասին՝ 80 գյուղ, Սիսակ., 255:
6	Այրք	19	162	
7	Աղահեջ	43	389	
8	Հարաւոյ	59	618	
9	Բաղք	41	380	Երկու Բաղքերը միասին՝ ըստ Ալիշանի ունեցել են 108 գյուղ: Սիսակ., 274, ըստ մեր հաշվումների՝ երկու Բաղքերը և Ձորքը միասին՝ 109:
10	Մյուս Բաղք—Քաշունիք	52	444	
11	Կոփսական	53	439	
12	Արեիք	24	262	
13	Ձորք***	16	148	
14	Երևոակ	30	360	գրամ և 08
15	Ժահակ	48	543	
	Ընդամենը	680	6580	դահեկան և 0,8 գրամ

* Հավանաբար պետք է լինի՝ այլք:

** Սողից գավառը ընդգրկում է Այրքը (այլք):

*** Ձորքը Բաղքի հետ կազմում է մեկ գավառ:

Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակի թվական միավորների առեղծվածի բացահայտումը հիմք է տալիս ենթադրելու, որ Տաթևի, այնուհետև նորավանքի եպիսկոպոսական աթոռները նույնպես, քննարկվող ժամանակաշրջանում նախընտրել են հարկատու գյուղերից գանձել տասանորդը փողով՝ այսինքն՝ դրամով և դահեկանով⁷⁷, քանի որ կոնխիկ դրամի որոշ մասը ներդրվելու էր շրջապտույտի մեջ և նպաստելու էր նորանոր կալվածների ձեռք բերմանը, մուսնավորապես, գնումների միջոցով:

Հիշյալ փաստերը հնարավորություն են ընձեռում կազմել Սյունյաց նահանգի առանձին գավառների գյուղերից վերցվող հարկերի (տասանորդի)

⁷⁷ Մէկ դահեկանը հավասար է 10 դրամի: Օրբելյանը հաստատում է այս փաստը՝ «հինգ հարիւր դահեկան, որ լինի 5000 դրամ...» («Պատմութիւն», էջ 357):

աղյուսակը (էջ 56)։ Ինչպես տեսնում ենք աղյուսակից, հարկատու 680⁷⁸ բնակավայրերից Սյունյաց եպիսկոպոսարանը դանձել է 6580 դահեկան և ութ դրամ կամ 65,808 դրամ⁷⁹։ Կարելի է ենթադրել, որ մնացած գյուղերը⁸⁰ թերևս դուրս են մնացել ցուցակից կամ հարկ վճարել են եպիսկոպոսական այլ թեմերի՝ քաղաքական կամ այլ պայմաններից ելնելով։ Այս հարցը կարոտ է հատուկ քննության, որի արդյունքներն, անտարակույս, խորապես կնպաստեն Սյունիքի սոցիալ-տնտեսական հարաբերությունների և մի շարք, դեռևս պատմադիտությանը անհայտ հարցերի համակողմանի լուսաբանմանը։

Այսպիսով, վերը շարադրածից կարելի է հանդել հիմնականում երկու հետևություն։

1. Չարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում դրամական շրջանառության յայն ծավալին դուրընթաց վանքերն ու եկեղեցիները ևս իրենց օգտին գանձվող տասանորդը, ինչպես նաև տուրքերն ու հարկերը նախընտրում էին վերցնել կանխիկ դրամով, իսկ վանքապատկան տնտեսություններում, մասնավորապես երկրագործության մեջ, առավել շահով կիրառվում է դրամական ոնետան։

2. Հիշյալ պատմաշրջանում որպես գործուն, «դրամն վարուն» (Ալիշան) շրջապատույտի մեջ եղել է հիմնականում արծաթ դրամը՝ իր մի շարք կոնկրետ անվանումներով։

Г. М. ГРИГОРЯН

РАЗВИТИЕ ДЕНЕЖНЫХ ОБРАЩЕНИЙ В СЮНИКСКОЙ ОБЛАСТИ И ВОПРОС СПИСКА НАЛОГОВ СТ. ОРБЕЛЯНА

Р е з ю м е

В статье на многочисленных примерах показано, что в эпоху развитого феодализма (IX—XIII вв.) во всеобщем обращении возрастает роль серебряной монеты, именуемой «спитак» или «спитак дахекан», причем в нарративных источниках замечается, что если речь идет о серебряной монете, то слово «դահեկան» (дахекан) употребляется с прилагательным «спитак» (белый), в то время как для обозначения золотой монеты используется термин «кармир» (красный) или же «ոսկյա» (золотой).

⁷⁸ Ըստ Ստ. Օրբելյանի ցուցակի Սյունիքի եպիսկոպոսական աթոռին հարկ վճարող 12 գավառների «շինից գումարն է վեց հարիւր եօթանասուն և ծօթն» (Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 379)։

⁷⁹ Եկեղեցական տասանորդը հատուկ գործաւալների միջոցով կուտակվում էր եպիսկոպոսարանում, իսկ աշխարհիկ ֆեոդալներին տրվող հարկերի ստացվածքն ու իշխանական գանձերը պահվում էին բերդ-ղղյակում. այսպիսին էր Երնջակի բերդը, որն Օրբելյանի վկայությամբ՝ կոչվում էր «տուն գանձու և հարկաց աշխարհի» (Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 7)։

⁸⁰ Բաղաց թագավորության ժամանակ Սյունիքը ունեցել է 1400 գյուղ (Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 245)։

На основании эпиграфических материалов автор статьи приходит к выводу, что в XIII веке основным средством денежного обращения была серебряная монета. Это подтверждает и историк Степанос Орбелян.

Эпоха развитого феодализма знаменуется новым подъемом церковно-монастырского землевладения. Высшее духовенство армянской церкви, приспособляясь к правовым нормам светских феодалов, в свою очередь старалось получить десятину наличными деньгами. То, что церковная иерархия старалась взимать десятину наличными деньгами, узнаем из грамот великих и удельных князей Киевской Руси IX—XII вв. С этой точки зрения автор статьи и затрагивает вопрос «Списка налогов» Сюнийской области, приведенного в знаменитой книге историка XIII века архиепископа Степаноса Орбеляна «*Պատմութիւն տանն Սրբաշինի*». В статье широко обсуждается история изучения этого «Списка», начиная с 90-х годов прошлого столетия по настоящее время.

В заключении делаются следующие выводы:

1. В эпоху развитого феодализма, в частности в XIII в., после нашествия монголов в Армению во всеобщем обращении была серебряная монета.

2. Армянская феодальная церковь стремилась взимать десятину наличными деньгами, а в монастырских хозяйствах была введена, наряду с натуральной, денежная рента.